

ՔԱՂՎԱԾՔ # 1

«ԱԶԳԱՅԻՆ ՀԻՓՈԹԵՔԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՎՎԿ ՓԲԸ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ք. Երևան

23 ապրիլի 2014թ.

1. Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ՝ զեկույցով ելույթ ունեցավ Ընկերության գլխավոր հաշվապահ Քրիստինա Քարամյանը: Ներկայացնելով Ընկերության 2013թ տարեկան գործունեությունը՝ զեկուցողը ներկայացրեց Ընկերության ամփոփ ֆինանսական ցուցանիշները, ակտիվների, եկամուտների և ծախսերի կառուցվածքը, Ընկերության տարեկան ֆինանսական հաշվետվությունները և տարեկան շահույթի բաշխման առաջարկը՝ 2013 թվականի գործունեության արդյունքներով ստացված շահույթի 5%-ը, որը կազմում է 26,838,702.00 (քսանվեց միլիոն ութ հարյուր եռեսունուրեց հազար յոթ հարյուր երկու) ՀՀ դրամ ուղղել Ընկերության պահուստային հիմնադրամի համալրմանը, իսկ շահույթի մնացած մասը՝ 509,935,336.72 ՀՀ դրամ (հինգ հարյուր ինը միլիոն ինը հարյուր երեսունհինգ հազար երեք հարյուր եռեսունվեց ՀՀ դրամ յոթանասուներկու լումա) որպես չբաշխված շահույթ թողնել «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ տրամադրության տակ:

Քվեարկության դրվեց Ընկերության 2013 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները և շահույթի բաշխման առաջարկը հաստատելու հարցը:

Օրակարգի երկրորդ հարցի քվեարկության արդյունքները հետևյալն են.

կողմ՝ 100% ձայներին տնօրինող բաժնետեր

դեմ՝ չկա

ձեռնպահ՝ չկա:

Քվեարկության արդյունքում ժողովը միաձայն

ՈՐՈՇԵՑ

Հաստատել Ընկերության 2013 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունները և շահույթի բաշխման առաջարկը՝ 2013 թվականի գործունեության արդյունքներով ստացված շահույթի 5%-ը, որը կազմում է 26,838,702.0 (քսանվեց միլիոն ութ հարյուր եռեսունուրեց հազար յոթ հարյուր երկու) ՀՀ դրամ ուղղել Ընկերության պահուստային հիմնադրամի համալրմանը, իսկ

շահույթի մնացած մասը՝ 509,935,336.72 ՀՀ դրամ (հինգ հարյուր ինը միլիոն ինը հարյուր եոթսունհինգ հազար երեք հարյուր եոթսունվեց ՀՀ դրամ յոթանասուներկու լումա) որպես չբաշխված շահույթ թողնել «Ազգային Հիփոթեքային Ընկերություն» ՎՎԿ ՓԲԸ տրամադրության տակ:

Օրակարգը սպառվեց և նիստի նախագահողը ժամը 17:00-ին նիստը հայտարարեց փակված:

Նիստը նախագահող՝

Արթուր Զավադյան

Նիստի քարտուղար՝

Մայրանուշ Գրիգորյան

ք. Երևան

---,--,2014թ